

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Արևելահայաստանի բանաստեղծական հերթագրությունը.— Սուրբ խումբի նախկին եպիսկոպոս Կիւրիոսի և Իմերէթիայի եպիսկոպոս Լեօնիդի ձերբակալութեանց մասին, կասկածուելով Վրաստանի Էկզարխ Նիկոնի սպանութեան մէջ մասնակցութիւն ունենալու մ, «НОВ. РУСЬ»-ի աշխատակիցը դիմել է Սինօդի անդամ արքեպիսկոպոսներէից մինին հարցով, թէ այս ձերբակալութիւններէ մասին ի՞նչ է յայտնի Սինօդին: «Առ այժմ ոչինչ, պատասխանել է Սինօդի անդամը, որովհետեւ այս ձերբակալութիւնները գեաւ տեղի չեն ունեցել: Բայց մենք ամենեւին չենք զարմանալ, եթէ ոչ այսօր, վաղը մեզ տեղեկացնեն, որ իսկապէս սրբազան Կիւրիոսն ու Լեօնիդը ձերբակալուած են: Բանը նրանումն է, որ Կովկասի քաղաքացիական իշխանութիւնը հետապնդելով Էկզարխ Նիկոնի սպանութեան գործին, կապ է գտել կործնեցեալ սպանիչներին և յիշեալ սրբազաններէ մէջ և նրանց դատի է կանչել, իսկ քննութիւնից մինչև ձերբակալութիւնը, ինչպէս յայտնի է, միայն մի քայլ է»:

«Բայց մի՞թէ Սինօդը կարող է հաւատալ, որ եկեղեցու բարձր ներկայացուցիչները—եպիսկոպոսները կարող են մասնակցութիւն ունեցած լինել այդպիսի զաղրելի գործում, ինչպէս մարդասպանութիւնն է»:

«Ի՞նչ կայ զարմանալու: Որտեղ խառն է քաղաքականութիւնը, այնտեղ ամեն բան կարելի է, իսկ սրբազան Կիւրիոսն ու Լեօնիդը Սինօդին վաղուց յայտնի են իբրեւ ոչ մի բանի առաջ կանգ չառնող քաղաքական գործիչներ»:

Եթէ ձեռք են «НОВ. РУСЬ» թերթի մէջ առաջ բերած բարձրատախճան հոգեւորականի խօսքերը, մեզ մնում է միայն զարմանալ, որ Սինօդի անդամ արքեպիսկոպոսը հնարաւոր է համարում իւր եղբայրակիցներին մեղսակցութիւնը այդ սպանութեան գործում և ունի այն համոզմունքը, թէ քաղաքական խնդիրներում ամեն բան թոյլատրելի է, նոյն իսկ մարդասպանութիւնն:

Դատաւարական հարցը.— Դատանանքների խնդրով ըզբաղուող յանձնաժողովը վերջնականապէս ընդունել է մէկ դատանութիւնից միւս դատանութիւն անցնելու օրինադիժը: Սրինադի ընադիրը յանձնաժողովի խմբադրութեան մէջ հետևեալն է:

«Յօդուած 1. Ամեն մի անհատ, որ հասել է 21 տարին,

իրաւունք ունի ընդունելու ամեն տեսակ դաւանութիւն և վարդապետութիւն, որին պատկանելը չի համարում քրէական յանցանք»:

«Յօդուած 2. Անշաղիահատներին, որոնք օրէնքով ամուսնութեան հասակին են հասել, յիշեալ իրաւունքը տրում է միայն ծնողներէ կամ անշաղիահատներէ վրանշանակուած խնամակալներէ, կամ հոգաբարձուներէ և կամ որդեգրողներէ համաձայնութեամբ. իսկ ծնողներէ մէկի կենդանութեան ժամանակ-այս վերջնիս թոյլտուութեամբ»:

«Յօդուած 3. 14 տարին չհասած երեխաները, ծնողներէ, կամ զբանցից կենդանի մնացածի դաւանափոխութեան դէպքում, չեն ընդունում ծնողի կամ ծնողներէ հաւատը»:

«Յօդուած 4. Օրինական կարգով մէկ դաւանութիւնից կամ վարդապետութիւնից միւսը անցնելու դէպքում գաղտնի էն ամեն տեսակ իրաւունք և պարտաւորութիւն եկեղեցու և կրօնական հաստատութեան և դրանցից հեռացողի մէջ»:

«Յօդուած 5. Այն դաւանութիւնից կամ վարդապետութիւնից միւսին անցնելու մասին տուած բոլոր յայտարարութիւնները, խնդիրներն ու այլ թղթերը ազատուում են դրօշմատւրքերից»:

«Մասն 2. Մի դաւանութիւնից միւսին անցնելը հաստատուում է (ցուցակագրւում է) 40 օրից յետոյ այն օրից հաշորած, երբ դաւանափոխը ներկայացնում է իւր յայտարարութիւնը»:

P. ՇԱ.

— Արեւք եւ երկարակեցութիւնը: Արեւը, ինչպէս ապացուցել են վերջին գիտական հետախուզութիւնները, անմիջական ազդեցութիւն ունի երկարակեցութեան վրա: Այն տեղերում, ուր ասորուայ մէջ արեւ օրերի թիւը շատ է, երկարակեացների թիւն էլ շատ է: Այսպէս Նիկեյարիայի Նուգանի մօտերքը, ուր ասորուայ մէջ մօտ 330 պայծառ ցերեկ է լինում, հարիւր տարին անց շատերն են հաշուում, քան որեւէ մի ուրիշ տեղ: Տեսնինա շատաւում, որ Նոյնպէս բարեյաջող է համարուում արեւի լոյսի նկատմամբ, 1904 թուի վիճակագրութիւնը ցոյց տուեց, որ 149,385 հոգուց 6422 ը եօթանասունամեայ ծերունիներ էին, որ կազմում է 4,4₀⁰, իսկ 1₀⁰ ութսունամեայ, որը համարւում է շատ բարձր տոկոս: Տեսնինից գաղթածները սովորաբար 50 տարուց յետոյ վերագառնում են իրանց ծննդավայրը, որպէս զի երկարացնեն իրանց կեանքը:

II. Շ. ՇԱ.

— Գաֆարի գործածութիւնը: Վիճակագրութիւնը սիրում է լուսաբանել մեր կեանքի բոլոր անկիւնները և ապա իւր հետեանքները հաղորդում է հասարակութեան լայն խաւերին: Անունգի համար գործադրուող նիւթերի մասին էլ նա ճիշդ հաշիւ է պահում: Ստորե մէնք առաջ ենք բերում նորերս հրատարակուած տեղեկութիւնները շաբարի գործածութեան մասին միքանի խոշոր երկրներում: Անգլիայում տարեկան իւրաքանչիւր անգլիացի գործ է ածում 60 դրվանքայ, ամերիկացին՝ 58, դանիացին՝ 44, շվեցարացին՝ 42, շվեդացին և նորվեգացին՝ 30—ապան, Ֆրանսիացին՝ 20, աւստրիացին՝ 16, իսկ ռուսաստանցին՝ 10 դրվանքայ շաբար:

Տարեկան գործադրուող շաբարի քանակը բոլոր երկրներում հաւասար է 12 միլիոն տոննի (տոննը—69 մուսթի):

Նիւ-Յորքի օկեֆեր: Նիւ-Եօրքի շէնքերը շարունակում են աճել աւելի ու աւելի բարձր: Ներկայումս ամենաբարձր շէնքը «Metropolitan Life»-ը ունի 50 յարկ և 213 մետր (300 արշին) բարձրութիւն: Բայց ամերիկական լրագիրների տեղով շուտով կը կառուցուի «Equitable Life», որ 72 յարկ և 277 մետր բարձրութիւն կունենայ: Նրա կտրի վրա պիտի ծածանի 45 մետր բարձրութիւն ունեցող ձողաբարձ դրօշակ: Բացի այդ, ծրագրուեն կառուցանել նոր արբունիք 38 յարկանի մի աշտարակով, որը 4,8 մետրով բարձր պիտի լինի Պարիզի էյֆելիան աշտարակից: (Էյֆելեան աշտարակը 300 մետր բարձրութիւն ունի):

Սրա հետ միասին Նիւ-Եօրքում նկատուում է լրացուցիչ ձգտումն շէնքերը շարունակել դէպի երկրի ներքո, այնպէս որ այժմ կան վեց յարկանի դեանափոր աներ:

— Բժօկի վարձատրութիւնն ու պատասխանատրութիւնը մեզանից 4150 տարի առաջ: 1897-99 թուերին Ֆրանսիացիք սկսեցին պեղումներ կատարել Սուզայում (Սուզան հին Պարսկաստանի մայրաքաղաքն է) և դտան Համուրաբի Թագաւորի կոթողի աւերակները: Համուրաբին Թագաւորում էր Բաբելոնում մօտ 2250 տարի Գ. առաջ: Համուրաբին նոր Թագաւորութեան և կարգերի հիմնադիրն է և այդ քարերի վրա փորել է տուել օրէնքներ, որը գործադրել էր տալիս Բաբելոնաստանում երկարամեայ ներքին խռովութիւններից ու անիշխանութիւնից յետոյ: Այս օրէնքների շարքում դանուում է հետեւեալ հրամանը, «Եթէ բժիշկը անդամահատում է հիւանդի ծանր վէրքը վիրաբուժական դանակով և առողջացնում է նրան, կամ եթէ նա կարում է աչքի ուռոցքը և աչքը ողջ է մնում, ապա նա իր աշխատավարձ ստանում է 10 սիկդ արծաթ: Եթէ նա սարկութիւնից ազատութիւն ստացած է, ապա նրան կհասնի 5 սիկդ, իսկ եթէ մէկի

ստորուկն է, ապա նրա տէր պարտական է նրան տալ 2 սիկլ:

«Եթէ բժիշկը բժշկում է մէկի կտրած սակրը կամ մարմնի փափուկ մասի հիւանդութիւնը, ապա հիւանդը պարտաւոր է վճարել նրան 5 սիկլ արծաթ: Եթէ նա ստրկութիւնից ազատուած է, նրան կհասնի 3 սիկլ, իսկ եթէ նա ստրուկ է, ապա նա իւր տիրոջից ստանում է 2 սիկլ: Թէ որքան արժէք այն ժամանակ սիկլ արծաթը, չդիտենք, բայց թէ բժշկի վարձատրութիւնը ինչքան մեծ էր, կարելի է դատել, համեմատելով ուրիշ աշխատանքների վարձատրութեան հետ, որոնց գնահատութիւնը մենք գտնում ենք նոյն օրէնքների մէջ: Այսպէս՝ նաւաստին, որը մէկի համար շինում է նաւ 60 քուռ ծանրութեամբ, ստանում է իւր աշխատանքի համար 2 սիկլ արծաթ: Նոյնպիսի մեծութեամբ նաւ վարձու վերցնողը իւրաքանչիւր օրուայ համար վճարում է $\frac{1}{6}$ սիկլ: Զպէտք է մտածել թէ այս նաւերը մեծ չափերի չէին, որովհետեւ օրէնքի մէջ կայ աւելի փոքր նաւերից օգտուելու գնի մասին յիշատակութիւն, որոնց համար սահմանած է աւելի քիչ վարձատրութիւն:

Բայց բժշկի պատասխանատուութիւնն էլ մեծ է եղել: Եթէ բժիշկը անդամահատութեան ժամանակ պատճառում է մէկին ծանր վէրք և հիւանդը մեռնում է կամ եթէ անդամահատութեան ժամանակ վնասում է հիւանդի աչքը, այն ժամանակ պէտք է կտրել նրա ձեռքերը: Եթէ բժիշկը անդամահատում է ազատ արձակուած ստրուկին և պատճառում է նրան ծանր վէրք, որից հիւանդը մեռնում է, այն ժամանակ նա պէտք է դառնայ ազատ արձակուածի ստրուկ:

Հետաքրքիր են նոյնպէս այն ժամանակուայ անասնաբույժներին վերաբերեալ օրէնքները: Եթէ անասնաբույժը կովին կամ իշին անդամահատում է և նրանց բժշկումէ, ապա նա ստանում է իւր աշխատանքի համար $\frac{1}{6}$ սիկլ արծաթ: Ուրեմն մարդու անդամատութիւնը 60 անգամ թանկ էր գնահատուում անասունի անդամահատութիւնից: Բայց անասնաբույժն էլ անդամատութեան դէպքում պատասխանատու է համարւում: Եթէ նա կովին կամ իշին անչափող կտրաւածք է անում, որի պատճառով կենդանին ստակում է, ապա նա պարտաւոր է կենդանու արժէքի $\frac{1}{4}$ տալ տիրոջը:

Հին ժամանակների բանաբ: Վետտֆալիայում հետլմէյա կան հին մարութիւնների պեղումների ժամանակ, ի միջի այլ իրերի, գտնուել է բրոնզեայ աման լի սև հեղուկով: Այս ամանը հեղուկով միտսին յանձնուել է հետադասութեան համար բժ. Գ. Կասսներին, որ վերլուծել է (Archiv d Pharm, 246, 329, 38) և գտել, որ այս հեղուկը թանաք է, պատրաստուած մելիք, կպրից, երկաթից և օրգանական նիւթերից, հետեւաբար աւելի նման է

տուշի: Որովհետեւ վերոյիշեալ ամբուսթիւնը կառուցուած է Օգոստոսեան դարաշրջանում, ապա այս գիւտից մենք կարողենք հանել այն եզրակացութիւնը, որ հռովմէացիք չինացիներին և եգիպտացիներին նման գործէին ածում իւրեւ թանաք մի տեսակ տուշ: «B. 3.»

Այսպիսի թանաքաման դարացած թանաքով անցեալ տարի գտնուել է նաև Անիի միջնաբերդի պեղումների ժամանակ: Յարգելի պրոֆեսոր Մառը ուղարկել էր վերլուծութեան, որի հետևանքը դեռ մեզ յայտնի չէ: Տ. խմբ.

Սուր բռնկու մեմեհայ: Երկու հոգեքան—Ինգը Յիւրեխից և Պետերոններ Նիւ-Յորքից իրանց խօսքերով, հնարելեն էլէքարահոն հողեհալի, որը միջոց է տալիս որոշելու մարդու անկեղծութեան չափը, որը ենթարկում է փորձի: Այն գէպքում, երբ հակասութիւն կայ մարդու տրտաքին հաւանութեան և ներքին ցակութեան մէջ, ուրիշ խօսքով, անկեղծ չէ, էլէքարահոն մեքենայի մէջ, որի վրա զրուում է անձի ձեռքը, առաջանում է հասանք, որով ուժեղանում է նրա հետ միացած լամպարի ընցը: Բոցի բարձրութեամբ կարելի է դատել փորձողի ոչ անկեղծութեան աստիճանը: Սակայն Պարիզեան Ֆիզիկոսներ Պոլ Ժանէ և Ժ. Դիւմա կասկածում են թէ կարելի լինի գիտնականորէն հաստատել այդպիսի փորձը: H. C. C.

— ԻՆՏԵՆՍԻՏԵՐԻԱԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒՄԸ. Անցեալ 1908 թուականը ներկայանում է Պետերբուրգի համար մասնաշաղկան ինքնասպանութիւնների տարի: 1904 թուին եղել է ընդամենը 427 ինքնասպանութեան գէպք, 1905-ին՝ 446, 1906-ին՝ 522, 1907-ին՝ անգործութեան հետ միասին աճել է և ինքնասպանների թիւը և հասել է 788 գէպքի. բայց 1908 թուին համարեա թէ կրկնապատկուել է ինքնասպանների թիւը: Պետերբուրգի քաղաքային վարչութեան վիճակագրութեան համաձայն եղել է ինքնասպանութեան 1442 գէպք, որոնցից 929 հոգի աղամարդ, 513 հոգի կին: Ամենածանր ամիսներն եղել են մայիս և օգոստոսը: Մայիսին եղել է 174, իսկ օգոստոսին—151 ինքնասպանութեան պէպք: Ինքնասպանների մեծամասնութիւնը 18-30 տարեկան հասակի են եղել: Ինքնասպանութեան միջոցներից ամենամեծ առկա եղել է թունաւորումն:

— 3200 հոգեկան հիւանդներ: Ինքնասպանութեան աճեցման հետ միաժամանակ աճում է և հոգեկան հիւանդների թիւը մայրաքաղաքում:

Ամեն շաբաթ խելագարանոց են ուղարկում 30-40 մարդ: Հիւանդանոցները լցուած են ներկայումս այն տեղերում 3200 հոգեկան հիւանդներ են հաշւում: «РѢСЬ»